



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/7486/05/22

Նախագահող դատավոր՝ Գ. Սոսյան

Դատավորներ՝

Կ. Գևորգյան

Ա. Հարությունյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7486/05/22
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող
զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

2026 թվականի հունվարի 20-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Օրինտ Ֆարմ» ՍՊ ընկերության վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.04.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական
գործով ըստ հայցի «Օրինտ Ֆարմ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ
պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ Կոմիտեի 20.09.2022 թվականի
թիվ 1517816 վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի
20.09.2022 թվականի թիվ 1517816 վարչական ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Դ. Դանիելյան) (այսուհետ՝ Դատարան)
10.10.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.04.2025
թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել է ամբողջությամբ՝
Դատարանի 10.10.2023 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է՝ հայցը
մերժվել է:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Յուրի Շիրինյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող որոշմամբ վերլուծելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ և 43-րդ կետերն ու «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված «սպառող» հասկացությունը, եկել է այն եզրահանգման, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի իմաստով սպառող է հանդիսանում միայն քաղաքացին, իսկ սույն գործով դեղերը մատակարարվել են ոչ թե քաղաքացիներին, այլ իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտներին: Նշվածը մեծաձախ առևտրին համապատասխանող գործունեություն է, իսկ նման գործունեությունը պահանջում է պարտադիր լիզենզիայի առկայություն, որն էլ սույն դեպքում հայցվորը չի ունեցել, ուստի հարկային մարմինն իրավաչափորեն է հայցվորին առաջադրել հարկային պարտավորություն:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունները հակասում են թիվ ՎԴ/1012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված նորմերին տրված մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշումից միանշանակ հետևում է, որ սույն գործով կիրառելի իրավահարաբերություններում «սպառող» հասկացությունը սահմանված չէ ինչպես «Դեղերի մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ պատասխանատվություն սահմանող իրավական ակտերով, մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգրքով, իսկ այլ իրավական ակտերում այդ հասկացությունը չունի միանշանակ սահմանում. մի դեպքում սահմանվում է որպես միայն քաղաքացի, մեկ այլ դեպքում՝ ինչպես քաղաքացի, այնպես էլ իրավաբանական անձ: ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ նման ոչ միանշանակության և հետևաբար՝ որոշակիության բացակայության պայմաններում, իրավաչափ չի կարող դիտարկվել տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվություն սահմանող վարչական ակտերի ընդունումը բացառապես այն հիմքով, որ դեղամիջոցներն իրացվել են իրավաբանական անձանց, ուստի ընկերության կողմից իրականացվել է դեղերի մեծաձախ իրացում՝ առանց նման լիցենզիայի առկայության: ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է իրավաչափ եզրակացության առ այն, որ նման պայմաններում, երբ սպառող հասկացությունն ունի տարբեր սահմանումներ, իրավական որոշակիության սկզբունքը և հարկ վճարողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը պահանջում են սույն հարաբերությունների մեկնաբանումը հոգուտ հարկ վճարողի:

Տվյալ դեպքում վիճարկվող որոշմամբ Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունները, որոնք վերաբերում են «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետին, մասնավորապես՝ դրանում նշված սպառող հասկացությանը, ամբողջությամբ հակասում են թիվ ՎԴ/1012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նույն նորմին տրված մեկնաբանությանը:

Հետևաբար, բողոքարկվող որոշման հիմքում դնելով միայն այն հիմնավորումները, որ հայցվորը դեղերն իրացրել է ոչ թե քաղաքացիներին, այլ իրավաբանական անձանց, հետևաբար՝ իրականացրել է դեղերի իրացման մեծաձախ լիցենզիա պահանջող գործունեություն, որը, սակայն չի ունեցել, ուստի վերջինիս նկատմամբ կայացված վարչական ակտն իրավաչափ է, գտնում է՝ անհիմն են ամբողջությամբ: Ընդ որում՝ բացառապես հենց այդ հիմքն է դրված նաև վիճարկվող վարչական ակտում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.04.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 10.10.2023 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության 25.08.2022 թվականի թիվ 1517816 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը մեծածախ իրացման լիցենզիայի պարտադիր պայմանի ուժի մեջ մտնելուց հետո (15.08.2020 թվականից) 30.09.2020 թվականի թիվ Ա 3811574064, 10.05.2021 թվականի թիվ Ա 5954538406, 26.05.2021 թվականի թիվ Ա 1941473974, 16.09.2021 թվականի թիվ Ա 0414076699, 06.05.2022 թվականի թիվ Ա 9343697760, 21.06.2022 թվականի թիվ Ա 4819395414 և 06.07.2022 թվականի թիվ Ա 9017776099 հարկային հաշիվներով իրականացրել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիա: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամանակ նույն թվականի օգոստոսի 25-ին այցելել են Արարատի մարզ, քաղաք Արտաշատ, Օգոստոսի 23/81Ա հասցեում գործող Ընկերությանը պատկանող դեղատուն, որտեղ Ընկերության տնօրեն Արմեն Քոչարյանը ծանոթացվել է Կոմիտեի ՀՕՀՎ պետի 18.08.2022 թվականի թիվ 1517816 որոշումից քաղվածքին, որից հետո վերջինս ներկայացրել է ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված դեղատնային գործունեության թիվ Կ-ԴԳ-002062, թիվ Կ-XX-000647, թիվ Կ-XX-001194 և թիվ Կ-XX-000462 լիցենզիաների լուսապատճենները և գրավոր հայտարարություն այն մասին, որ Արարատի մարզ, քաղաք Արտաշատ, Օգոստոսի 23/81ա, Շահումյան 15 12ա, գյուղ Նշավան, Պ. Սևակի 21, գյուղ Դվին հասցեներում իրականացնում է դեղատնային գործունեություն, իսկ Ընկերությունը դեղորայքը վաճառել է բացառապես սպառողներին: ՕՀ միջոցառումների ժամանակ հետազոտելով (pharm.cals.am) կայքը՝ պարզվել է, որ Ընկերության կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առկա են նաև դեղեր (դեղամիջոցներ) **(հատոր 1, գ.թ. 19-20):**

2) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 20.09.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517816 վարչական ակտով ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով հաշվարկվել և Ընկերությանը գանձման է առաջադրվել 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն, և նույն հոդվածի 3-րդ մասով 100.000 ՀՀ դրամ՝ որպես օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում **(հատոր 1, գ.թ. 17-18):**

3) Ապրանքների մատակարարման 30.09.2020 թվականի թիվ Ա 3811574064, 10.05.2021 թվականի թիվ Ա 5954538406, 26.05.2021 թվականի թիվ Ա 1941473974, 16.09.2021 թվականի թիվ Ա 0414076699, 06.05.2022 թվականի թիվ Ա 9343697760, 21.06.2022 թվականի թիվ Ա 4819395414 և 06.07.2022 թվականի թիվ Ա 9017776099 հարկային հաշիվներով Ընկերությունը համապատասխանաբար «Նարեկի գյուղապետարան» ՀՈԱԿ-ին, «Շահումյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, ՀՀ Արարատի մարզի «Գետազատ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, «Շահումյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» ՀՀ ասորական կրոնական կազմակերպությանը, Փոքր Վեդի համայնքի «Զարթոնք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ին և ՀՀ Արարատի մարզի «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին մատակարարել է դեղ-դեղամիջոցներ **(հատոր 1, գ.թ. 30-38):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքարկվող դատական ակտում «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի մեկնաբանությունը հակասում է թիվ ՎԴ/1012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.07.2025 թվականի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք դեղերի իրացման ժամանակ գնորդի իրավաբանական անձ լինելն ինքնին հանգեցնում է դեղերի համապատասխան իրացումը մեծածախ որակելուն:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով թիվ ՎԴ/2834/05/23 վարչական գործով 01.10.2025 թվականին կայացված որոշմամբ հայտնած դիրքորոշումը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հայաստանի Հանրապետության սահմանադիրը ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում՝ 60-րդ հոդվածում, ամրագրել է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Վերոնշյալի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականության իրավունքը ներառված է հիմնական իրավունքների շարքում, և դրա սահմանափակումների հիմքերը և ծավալները պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերջինս ցուցիչն է իրավական որոշակիության սկզբունքի, որին անդրադարձել են ՀՀ սահմանադրական դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով):

Այսպես. իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 13.05.2008 թվականի ՍԴՈ-753 որոշումը*):

Եվրոպական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, նշել է, որ ներպետական իրավունքում իրավական հիմքի առկայությունն ինքնին բավարար չէ օրինականության սկզբունքը բավարարելու համար: Իրավական հիմքը պետք է ունենա որոշակի որակ՝ այն պետք է համապատասխանի իրավունքի գերակայությանը և պետք է ապահովի կամայականություններից ազատություն (*տե՛ս, East West Alliance Limited v. Ukraine, թիվ 19336/04 գանգադով Եվրոպական դատարանի 23.01.2014 թվականի վճիռը, կետ 167*): Օրինականության սկզբունքը ենթադրում է, որ ներպետական իրավունքի կիրառելի դրույթները բավականաչափ մատչելի, ճշգրիտ և կանխատեսելի պետք է լինեն իրենց կիրառության մեջ (*տե՛ս, Օրինակ՝ Lekić v. Slovenia, թիվ 36480/07 գանգադով Եվրոպական դատարանի մեծ պալատի 11.12.2018 թվականի վճիռը, կետ 95*):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող իրավական նորմերը պետք է բավարարեն որոշակիության պահանջներին, որը հնարավորություն կտա անձանց հստակորեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները: Ըստ այդմ՝ վարչական մարմինների իրականացրած գործունեության հիմքում նախ անհրաժեշտ է, որ առկա լինի համապատասխան իրավական հիմք: Այդուհանդերձ զուտ իրավական հիմքի առկայությունը դեռ բավարար չէ, քանի որ այն պետք է ունենա որոշակի որակ՝ պետք է համապատասխանի իրավունքի գերակայությանը և պետք է ապահովի կամայականություններից ազատություն:

Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մաս է կազմում դեղային քաղաքականությունը, որի նպատակը բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով, ինչպես նաև դրանց ռացիոնալ կիրառումն ապահովելն է («Դեղերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ): Առողջապահության բնագավառում դեղային քաղաքականության մշակումն ու իրականացումը դեղերի շրջանառության պետական կարգավորման ուղղություններից մեկն է (Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) (*տե՛ս, «ԱՌԳՈ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության թիվ ՎԴ/9898/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.12.2024 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի մատչելիության ապահովման կարևորությունը և առանձնահատուկ դերը բնակչության համար՝ օրենսդիրը կարգավորել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառությունը, որն ընդգրկում է, ի թիվս այլնի, դեղերի մեծածախ և մանրածախ իրացումը և մեծածախ կամ մանրածախ իրացման համար լիցենզիայի տրամադրման պարտադիրությունն ու լիցենզիա

ստանալու կարգը, ինչպես նաև՝ առանց համապատասխան լիցենզիայի դեղերի մեծածախ կամ մանրածախ իրացում իրականացնելու համար պատասխանատվությունը:

Այսպես. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով, բացառությամբ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.1-ին հոդվածով սահմանված դեպքերի: Առանց լիցենզիայի նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը, որի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսվել է դեղատնային գործունեության, իսկ 6-րդ ենթակետով՝ դեղերի մեծածախ իրացման տեսակները:

ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում լիցենզավորման ինստիտուտը գործում է որպես անվտանգության, վերահսկողության ապահովման և հանրային շահի պաշտպանության կարևոր միջոց: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է այն գործունեության տեսակները, որոնց իրականացումն առանց համապատասխան լիցենզիայի արգելվում է, և դրանց թվում է նաև դեղերի մեծածախ իրացումը: Այս կարգավորումները միտված են կանխել անօրինական և չվերահսկվող գործունեությունն այն ոլորտներում, որոնք կարող են ազդել հասարակության առողջության, կյանքի և տնտեսական կայունության վրա: Հետևաբար, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու արարքի համար օրենքը նախատեսում է պատասխանատվություն. համապատասխանաբար առանց լիցենզիայի դեղերի մեծածախ իրացումը հանգեցնում է ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցման:

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության

հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում (Օրենքի 1-ի հոդված):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

20) **դեղերի շրջանառություն**՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

(...)

41) **դեղերի մեծածախ իրացում**՝ գործունեության տեսակ, որը ներառում է մատակարարի կողմից դեղ արտադրողից կամ դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ այլ մատակարարից դեղեր ձեռք բերելը կամ ներմուծելը կամ արտահանելը կամ պահպանելը կամ իրացնելը (բաշխելը), բացառությամբ սպառողներին դեղերի իրացման.

42) **մատակարար**՝ սահմանված կարգով մեծածախ իրացման լիցենզիա ստացած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

43) **դեղերի մանրածախ իրացում**՝ դեղերի իրացում կամ բաց թողնում սպառողներին:

Օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող անձը չի կարող իրականացնել դեղերի մեծածախ իրացում՝ դեղատնային գործունեության լիցենզիայի գործողության ժամանակահատվածում (այդ թվում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում):

ՀՀ վճռաբեկ դատարանը վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում փաստել է, որ օրենսդրությամբ սահմանվել են լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակներ, որոնց շարքին են դասվում դեղատնային գործունեությունը և դեղերի մեծածախ իրացումը: Ընդ որում, օրենսդրությամբ հատուկ սահմանվել է դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող սուբյեկտի՝ դեղերի մեծածախ իրացում իրականացնելու արգելք: Միևնույն ժամանակ օրենսդրությամբ բացահայտվել է նաև դեղերի մեծածախ և մանրածախ իրացման հասկացությունների բովանդակությունը, և սպառողին դեղերի իրացման հանգամանքն օրենսդիրը դասել է դեղերի իրացումը մեծածախ որակելու բացառությունների շարքին՝ այն դիտարկելով որպես դեղերի մանրածախ իրացում:

Այլ կերպ ասած՝ դեղերի մանրածախ և մեծածախ իրացման էական տարբերակիչ հատկանիշը դեղերի իրացումը կամ բաց թողումն է սպառողներին, ուստի յուրաքանչյուր դեպքում պարզելու համար, թե դեղերի իրացումն արդյո՞ք համարվում է մանրածախ, թե մեծածախ, կարևոր է բացահայտել դեղը ձեռք բերողի՝ սպառող լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է «սպառող» հասկացությանը, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել էր, որ դրա եզրութաբանական բովանդակությունը Օրենքում բացահայտված չէ, իսկ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում առկա են տվյալ եզրույթի տարաբնույթ սահմանումներ:

Մասնավորապես՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝ *սպառող*՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացի:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սպառող հասկացությունը բացահայտվել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, ըստ որի՝ **սպառողը** սպառման նպատակով ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ պետական մարմինն է:

Այսպիսով պարզ է դառնում, որ՝

- դեղերի մեծածախ իրացման սահմանումը նախատեսող, առանց համապատասխան լիցենզիայի դեղերի մեծածախ իրացման գործունեության արգելք և այդ արգելքը չպահպանելու հետևանքով պատասխանատվության միջոց սահմանող նորմատիվ իրավական ակտերը չեն սահմանում «սպառող» հասկացությունը,

- տարբեր նորմատիվ իրավական ակտեր նախատեսում են «սպառող» հասկացության տարբեր բնորոշումներ, մի դեպքում՝ սպառող է համարվում միայն քաղաքացին (ֆիզիկական անձը), մեկ այլ դեպքում՝ նաև իրավաբանական անձը կամ պետական մարմինը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ու «Դեղերի մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու համար ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվությունը վրա է հասնում նաև դեղերի մեծածախ իրացումն առանց համապատասխան լիցենզիայի առկայության իրականացնելու համար, որպիսի լիցենզիայի առկայության պահանջը գնահատելու համար կարևորվում է «սպառող» հասկացության բացահայտումը: Վերոնշյալ իրավական ակտերով «սպառող» հասկացության սահմանումը չկա, իսկ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում «սպառող» հասկացության տարբեր սահմանումներ են նախատեսված, հետևաբար՝ իրավական որոշակիության սկզբունքը և հարկ վճարողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը պահանջում են սույն հարաբերությունների մեկնաբանումը հոգուտ հարկ վճարողի:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դեղերի առուվաճառքի գործարքի գնորդի՝ սպառող չհանդիսանալու վերաբերյալ եզրահանգման գալու համար զուտ գնորդի իրավաբանական անձ լինելը բավարար հանգամանք չէ, քանի որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի ձևակերպումից պարզ չէ, թե տվյալ պարագայում ով կարող է համարվել սպառող՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «սպառող» հասկացության տարաբնույթ սահմանումների առկայությունը: Արդյունքում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ

հողվածի 1-ին մասի և ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա դեղերի առուվաճառքի գործարքի վաճառողին պատասխանատվության ենթարկելը և ըստ այդմ՝ տվյալ անձի սեփականության իրավունքը սահմանափակելը նրա համար, որ դեղերի վաճառք է իրականացրել իրավաբանական անձանց առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի, հակասում է իրավական որոշակիության պահանջին, քանի որ տվյալ անորոշության պատճառով համապատասխան սուբյեկտի, այն է՝ դեղերի վաճառք իրականացնող սուբյեկտի համար կանխատեսելի չեն իր վարքագծի հնարավոր հետևանքները (տե՛ս, *անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանն ընդդեմ Կոմիտեի թիվ ՎԴ/1012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.07.2025 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 20.09.2022 թվականի թիվ 1517816 վարչական ակտը:

Դատարանը հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «(...) Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով, իսկ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է սպառողների և արտադրողների (կատարողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամանակ ծագող հարաբերությունները, ուստի «Դեղերի մասին» ՀՀ օրենքի իմաստով, Դատարանի գնահատմամբ, «սպառող» կարող է հանդիսանալ ինչպես ֆիզիկական անձը, այնպես էլ իրավաբանական անձը, եթե ձեռք բերված դեղն օգտագործվում է վերջինիս կարիքները հոգալու համար:

Երկրորդ, թեև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ «սպառող» է հանդիսանում «քաղաքացին», այնուամենայնիվ Դատարանը գտնում է, որ տվյալ եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ «սպառող» է համարվում նաև իրավաբանական անձը, որն իր կարիքների համար ձեռք է բերում որևէ ապրանք կամ ծառայություն, հակառակ դեպքում, եթե տվյալ եզրույթը մեկնաբանվի բառացի, ապա կստացվի, որ այդ օրենքի իմաստով սպառող են համարվում միայն քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձինք, որպիսի մեկնաբանությունը, Դատարանի գնահատմամբ, կկրի չափազանց ձևական բնույթ:

(...)

Դատարանը փաստում է, որ «Օրինելի Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից համապատասխան հաշվարկային փաստաթղթերով «Փոքր Վեդի համայնքի «Զարթոնք» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, ««Արևելքի ասորական կաթողիկոսության Սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն» կրոնական կազմակերպությանը, «Շահումյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, «ՀՀ Արարատի մարզի Նոր կյանքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, «ՀՀ Արարատի մարզի Գեղազար համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, «Շահումյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, «Նարեկի գյուղապետարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը դեղերի իրացումը տվյալ դեպքում չի կարող որակվել որպես դեղերի մեծածախ իրացում, քանի որ գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում այն փաստական հանգամանքը, որ

վերոնշյալ կազմակերպությունները հայցվոր «Օրինյու Ֆարմ» ՍՊ ընկերությունից ձեռք բերված դեղերն իրացրել են այլ անձանց, այսինքն՝ չեն հանդիսացել «Օրինյու Ֆարմ» ՍՊ ընկերությունից ձեռք բերված դեղերի վերջնական սպառողներ, վերոնշյալի վերաբերյալ ապացույց պատասխանող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից չի ներկայացվել, հետևաբար Դատարանը գտնում է, որ վիճարկվող՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 20.09.2022թ. «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517816 վարչական ակտն ընդունվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների խախտմամբ, այդ թվում՝ դրանց սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, ուստի ոչ իրավաչափ վարչական ակտ է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է անվավեր ճանաչման»:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը՝ բեկանել է Դատարանի 10.10.2023 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել է: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ «(...) հայցվորի կողմից դեղերը մատակարարվել են սպառող չհանդիսացող սուբյեկտի, քանի որ օրենքի սահմանմամբ սպառողը բացառապես անձնական, ընդանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին է: Մինչդեռ սույն պարագայում, ինչպես վերը նշվեց, դեղերը մատակարարվել են ոչ թե քաղաքացիներին, այլ իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտներին, ինչը հենց մեծածախ առևտրին համապատասխանող գործունեություն է, իսկ նման գործունեությունը պահանջում է պարտադիր լիզենզիայի առկայություն, որն էլ սույն դեպքում հայցվորը չի ունեցել, ուստի առանց լիզենզիա դեղերի մեծածախ իրացման համար հարկային մարմինն իրավաչափորեն է հայցվորին առաջադրել հարկային պարտավորություն:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ (...) «Դեղերի մասին» ՀՀ օրենքում «սպառող» եզրույթի օգտագործումը պայմանավորված է հենց մանրածախ (քաղաքացու կողմից իրականացվող) առևտրի հետ, քանի որ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այդ հասկացությունը «Դեղերի մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է առանց այլ բովանդակության սահմանման, այսինքն՝ այն հստակ բացահայտված է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որը կանոնակարգում է սպառողների և արտադրողների (կատարողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամանակ ծագող հարաբերությունները՝ «սպառող» հասկացության ընդգրկման առումով ներառելով նման հարաբերություններից բխող բոլոր ոլորտները, այդ թվում՝ դեղերի ոլորտը: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում մանրածախ առևտրին վերաբերող դրույթներից հետևում է, որ նման առևտրի սուբյեկտ է հանդիսանում հենց գնորդ-քաղաքացին, այսինքն՝ ֆիզիկական անձը, ավելին՝ նույն օրենսգրքի ուժով նման հարաբերությունների նկատմամբ կիրառելի են սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքները, որի ուժով, ինչպես վերը նշվեց, սպառողը բացառապես անձնական, ընդանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին է:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վիճարկվող վարչական ակտն իրավաչափ է, քանի որ այն ընդունվել է նշված նորմերի պահանջների պահպանմամբ, իսկ

Դատարանի հետևությունները հիմնավոր չեն, ուստի վերաքննիչ բողոքը հիմնավոր է և այն ենթակա է բավարարման»:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության 25.08.2022 թվականի թիվ 1517816 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը մեծածախ իրացման լիցենզիայի պարտադիր պայմանի ուժի մեջ մտնելուց հետո (15.08.2020 թվականից) 30.09.2020 թվականի թիվ Ա 3811574064, 10.05.2021 թվականի թիվ Ա 5954538406, 26.05.2021 թվականի թիվ Ա 1941473974, 16.09.2021 թվականի թիվ Ա 0414076699, 06.05.2022 թվականի թիվ Ա 9343697760, 21.06.2022 թվականի թիվ Ա 4819395414 և 06.07.2022 թվականի թիվ Ա 9017776099 հարկային հաշիվներով իրականացրել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիա:

Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 20.09.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517816 վարչական ակտով ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով հաշվարկվել և Ընկերությանը գանձման է առաջադրվել 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն, և նույն հոդվածի 3-րդ մասով 100.000 ՀՀ դրամ՝ որպես օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 20.09.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517816 վարչական ակտի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Ընկերության կողմից 30.09.2020 թվականի թիվ Ա 3811574064, 10.05.2021 թվականի թիվ Ա 5954538406, 26.05.2021 թվականի թիվ Ա 1941473974, 16.09.2021 թվականի թիվ Ա 0414076699, 06.05.2022 թվականի թիվ Ա 9343697760, 21.06.2022 թվականի թիվ Ա 4819395414 և 06.07.2022 թվականի թիվ Ա 9017776099 հարկային հաշիվներով իրականացրած դեղերի մեծածախ իրացման գործարքների մյուս կողմում, այսինքն՝ գնորդի կարգավիճակում, եղել են իրավաբանական անձինք, մասնավորապես՝ համապատասխանաբար «Նարեկի գյուղապետարան» ՀՈԱԿ-ը, «Շահումյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, ՀՀ Արարատի մարզի «Գետազատ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, «Շահումյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» ՀՀ ասորական կրոնական կազմակերպությունը, Փոքր Վեդի համայնքի «Ջարթոնք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը և ՀՀ Արարատի մարզի «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, և նշված իրավաբանական անձանց՝ գործարքների գնորդների կարգավիճակում հանդես գալու հանգամանքը բավարար է եղել Կոմիտեի համար համապատասխան գործարքը որակելու որպես մեծածախ իրացում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո վարչական մարմնի այն դիրքորոշումը, որ դեղերի իրացման գործարքների գնորդի ֆիզիկական անձ չլինելը բավարար հանգամանք է ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան կիրառելու համար, խախտում է իրավական որոշակիության պահանջը:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակներում գնահատելով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը,

ստուգելով դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ «(...) դեղերը մատակարարվել են ոչ թե քաղաքացիներին, այլ իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտներին, ինչը հենց մեծածախ առևտրին համապատասխանող գործունեություն է, իսկ նման գործունեությունը պահանջում է պարտադիր լիզենզիայի առկայություն, որն էլ սույն դեպքում հայցվորը չի ունեցել, ուստի առանց լիզենզիա դեղերի մեծածախ իրացման համար հարկային մարմինն իրավաչափորեն է հայցվորին առաջադրել հարկային պարտավորություն», անհիմն է: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «սպառող» եզրույթի միասնական սահմանման բացակայության պայմաններում դեղերի իրացումը մեծածախ որակելու և այն համապատասխան լիցենզիա պահանջող գործարք համարելու, ու ըստ այդմ՝ առանց լիցենզիայի համապատասխան գործունեությունն իրականացնելու դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար բավարար չէ միայն այն հանգամանքը, որ դեղն իրացվել է իրավաբանական անձանց առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի առկայության: Հետևաբար, Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 20.09.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517816 վարչական ակտն իրավաչափ չէ և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոնշյալ պատճառաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Տվյալ դեպքում բողոք բերած անձի կողմից, որպես իրավական փաստարկ, վկայակոչվել է թիվ ՎԴ/1012/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.07.2025 թվականի որոշումը, որով արձանագրվել է, որ «(...) *դեղերի առուվաճառքի գործարքի գնորդի՝ սպառող չհանդիսանալու վերաբերյալ եզրահանգման գալու համար զուտ գնորդի իրավաբանական անձ լինելը բավարար հանգամանք չէ, քանի որ Օրենքի 3-րդ հոդվածի*

1-ին մասի 41-րդ կետի ձևակերպումից պարզ չէ, թե տվյալ պարագայում ով կարող է համարվել սպառող՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «սպառող» հասկացության տարաբնույթ սահմանումների առկայությունը: Արդյունքում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա դեղերի առուվաճառքի գործարքի վաճառողին պատասխանատվության ենթարկելը և ըստ այդմ՝ տվյալ անձի սեփականության իրավունքը սահմանափակելը նրա համար, որ դեղերի վաճառք է իրականացրել իրավաբանական անձանց առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի, հակասում է իրավական որոշակիության պահանջին, քանի որ տվյալ անորոշության պատճառով համապատասխան սուբյեկտի, այն է՝ դեղերի վաճառք իրականացնող սուբյեկտի համար կանխատեսելի չեն իր վարքագծի հնարավոր հետևանքները:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու լիազորությունը, վերահաստատում է թիվ ՎԴ/2834/05/23 վարչական գործով 01.10.2025 թվականին կայացված որոշմամբ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են, ի թիվս այլնի, նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Սույն գործով նկատի ունենալով այն փաստը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Ընկերությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 35.250 ՀՀ դրամ պետական տուրք, այնինչ, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, պետք է վճարել 30.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ դրամական պահանջի գործով վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար, վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 30.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա, ենթակա է հատուցման Կոմիտեի կողմից: Միաժամանակ, վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ավել վճարված պետական տուրքը՝ 5.250 ՀՀ դրամի չափով, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Միաժամանակ, վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի կազմում ներառել է նաև ներկայացուցիչների վճարները:

Տվյալ դեպքում, Ընկերության (Պատվիրատու) և անհատ ձեռնարկատեր Յուրի Շիրինյանի (Կատարող) միջև կնքված «Իրավաբանական ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի (պատճենի) **(ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից)** 1) կետի 1.1. ենթակետով սահմանվել է, որ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է իրավաբանական ծառայություններ, այն է՝ թիվ ՎԴ/7486/05/22 վարչական գործով կազմում և ՀՀ վճռաբեկ դատարան է ներկայացնում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.04.2025 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք: Սույն պայմանագրի 1) կետի 2.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն Կատարողին Պայմանագրի 1) կետի 1.1 ենթակետով նշված ծառայությունների մատուցման դիմաց վճարում է 130.000 ՀՀ դրամ (...):

Սույն գործում առկա են նաև Ընկերության կողմից Յուրի Շիրինյանին 10.10.2022 թվականին տրված լիազորագիրը և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը **(հատոր 1-ին, գ.թ. 15):**

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված

փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո հաշվի առնելով սույն գործով ներկայացուցչի կատարած աշխատանքի ծավալը՝ վճռաբեկ բողոքը կազմելն ու ներկայացնելը, գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը) և այն համադրելով գործում առկա՝ Ընկերության և անհատ ձեռնարկատեր Յուրի Շիրինյանի միջև կնքված «Իրավաբանական ծառայությունների մատուցման մասին» պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարի չափի հետ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ողջամիտ է Կոմիտեից հոգուտ Ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանում գործի քննության հետ կապված փաստաբանական վճարի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.04.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 10.10.2023 թվականի վճռին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «Օրինետ Ֆարմ» ՍՊ ընկերության բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «Օրինետ Ֆարմ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանում ներկայացուցչի վճարի հատուցման ենթակա գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Զեկուցող

Ք. ՄԿՈՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ